



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի ապրիլին (վերլուծություն)

2017 թվականի ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 11290 գործարք, որոնց քանակը 2017 թվականի մարտ ամսվա համեմատ նվազել է 18.4 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 24.5 %-ով:

2017 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3213 օտարման գործարքի 71.3 %-ը կազմել է առուվաճառքը, 28.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.2 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 41.8 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.5 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի ապրիլին, 2017 թվականի մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքը նվազել է 19.3 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 17.9 %-ով:

2017 թվականի ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.4 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի ապրիլին, 2017 թվականի մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 24.8 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 4.9 %-ով:

2017 թվականի ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	ապրիլ 2016 թ.	ապրիլ 2017 թ.	մարտ 2017 թ.
Կենտրոն	428000	427000	428250
Արաբկիր	357000	330000	357000
Քանաքեռ-Զեյթուն	283100	270000	276000
Նոր Նորք	254150	240000	249000
Ավան	261500	255000	256500
Էրեբունի	252300	240000	245450
Շենգավիթ	257600	240100	250200
Դավթաշեն	276650	250200	265350
Աջափնյակ	250900	242000	247100
Մալաթիա-Սեբաստիա	244000	230000	238000
Նուբարաշեն	157250	156000	157700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի ապրիլին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի մարտի համեմատ՝ նվազել է 3.1%-ով:

2017 թվականի ապրիլին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 195 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի մարտի համեմատ նվազել է 43.5 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 32.1 %-ով:

2017 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		ապրիլ 2016 թ.	ապրիլ 2017 թ.	մարտ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116050	110000	112000
	Ապարան	58350	58800	58800
	Թալին	66700	63200	63500
Արարատ	Արտաշատ	98700	94000	96000
	Մասիս	115800	110000	113000
	Վեդի	101700	90000	101600
Արմավիր	Արարատ	77400	77850	77850
	Վաղարշապատ	154200	150000	154000
	Արմավիր	121250	118050	121100
Գեղարքունիք	Մեծամոր	87600	84000	86000
	Սևան	99400	85300	88300
	Գավառ	60500	55000	59000
Գեղարքունիք	Մարտունի	107700	101100	101100
	Վարդենիս	45200	45400	45400
	Ճամբարակ	28750	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	86000	88600
	Ստեփանավան	74750	70000	74900
	Սպիտակ	99850	95000	95000
Լոռի	Ալավերդի	55700	50000	55950
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
Լոռի	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	20500	20500
	Արմավիր	155150	150000	153000
Կոտայք	Նոր Հաճն	128550	120000	127000
	Բյուրեղավան	108250	100000	103000
	Եղվարդ	109800	102000	108000
Կոտայք	Հրազդան	63900	58000	62000
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	80000	83000
Շիրակ	Գյումրի	109450	101400	109400
	Արթիկ	67200	67600	67600
	Մարալիկ	41000	41150	41150
Սյունիք	Գորիս	123600	124200	124200
	Կապան	94900	96000	95900
	Սիսիան	92200	90000	91000
Սյունիք	Մեղրի	82900	84700	84500
	Քաջարան	94850	96300	96000
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	93000	93000
	Եղեգնաձոր	126150	124000	126400
	Ջերմուկ	113200	110000	112000
Տավուշ	Դիլիջան	115500	111000	114000
	Իջևան	118550	115000	115000
	Բերդ	60450	60600	60600
Տավուշ	Նոյեմբերյան	50350	50600	50600
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի մարտի համեմատ համեմատ՝ նվազել է 2.2%-ով:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 238 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 86 գործարք, մարզերում՝ 152 գործարք: 2017 թվականի ապրիլին, 2017 թվականի մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն նվազել է 33.3 %-ով, ընդ որում, Երևանում՝ 14.9 %-ով, իսկ մարզերում՝ 40.6 %-ով: 2017 թվականի ապրիլին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 23.2 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 11.6 %-ով:

2017 թվականի ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	ապրիլ 2016 թ.	ապրիլ 2017 թ.	մարտ 2017 թ.
Կենտրոն	476100	476000	476350
Արաբկիր	383000	380000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	285000	290000
Նորք-Մարաշ	319200	300000	310000
Ավան	270500	263000	267000
Էրեբունի	239750	235100	239000
Շենգավիթ	255000	230000	250000
Դավթաշեն	276000	270000	272000
Աջափնյակ	250050	245000	248000
Մալաթիա-Սեբաստիա	238000	236000	238000
Նուբարաշեն	150800	150000	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի ապրիլին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի մարտի համեմատ՝ նվազել է 1.7%-ով:

2017 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		ապրիլ 2016 թ.	ապրիլ 2017 թ.	մարտ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	134000	135000
	Ապարան	60050	60000	60000
	Թալին	69250	67800	68000

Արարատ	Արտաշատ	100000	98100	100100
	Մասիս	115100	112100	115100
	Վեդի	102300	90700	102300
Արմավիր	Արարատ	88000	88000	88000
	Վաղարշապատ	153100	151150	153150
Գեղարքունիք	Արմավիր	107000	103950	107000
	Սևան	94950	92950	94950
	Գավառ	57100	54100	57100
	Մարտունի	96100	95200	96200
	Վարդենիս	41150	41150	41150
Լոռի	Ճամբարակ	31100	31100	31100
	Վանաձոր	100900	100000	100000
	Ստեփանավան	91200	88000	90000
	Սպիտակ	114000	110100	113000
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	45950	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
Կոտայք	Ախթալա	30000	30000	30000
	Աբովյան	157300	157350	157350
	Նոր Հաճն	129800	126000	129000
	Բյուրեղավան	120500	111000	118000
	Եղվարդ	116100	111000	114000
	Հրազդան	82600	73000	79000
	Ծաղկաձոր	305000	301000	305000
Շիրակ	Չարենցավան	83000	80000	80000
	Գյումրի	119250	118200	119200
	Արթիկ	63450	60400	63400
Սյունիք	Մարալիկ	52000	52000	52000
	Գորիս	130000	130050	130050
	Կապան	100650	100750	100750
	Սիսիան	96500	96600	96500
	Մեղրի	84600	84000	85000
Վայոց ձոր	Դաստակերտ	11610	11810	11610
	Վայք	90150	88300	88000
	Եղեգնաձոր	116750	115000	115000
Տավուշ	Ջերմուկ	131300	130000	130000
	Դիլիջան	115550	113500	115900
	Իջևան	123200	121200	123200
	Բերդ	60100	57100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի մարտի համեմատ՝ նվազել է 1.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի ապրիլին հանրապետությունում օտարվել է 1109 միավոր (738.12 հա) հող, որից Երևանում՝ 107 միավոր (7.61 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 622 միավոր (696.47 հա), որից Երևանում՝ 9 միավոր (0.75 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 347 միավոր (29.00 հա), որից Երևանում՝ 55 միավոր (1.98 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 115 միավոր (8.24 հա), որից Երևանում՝ 41 միավոր (4.57 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 12 միավոր (2.00 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.31 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 3 միավոր (0.89 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 9 միավոր (1.47 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.05 հա) մակերեսով:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 912 միավորի (648.88 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 94 միավոր (4.01 հա), նվիրատվության գործարք՝ 191 միավորի (73.51 հա), որից Երևանում՝ 10 միավոր (3.58 հա) և փոխանակության գործարք՝ 6 միավորի (15.73 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.02 հա):

Հանրապետությունում 2017 թվականի ապրիլին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 28.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 37.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 10.9 %-ով արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 25.0 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 264.58 հա, որից 263.18 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.8 %-ը կամ 190 միավորը (251.68 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 33 միավոր (0.88 հա), իսկ 78.2 %-ը կամ 713 միավորը (397.15 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 57 միավոր (3.10 հա): 2017 թվականի ապրիլին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 9 գործարք (0.05 հա):

Ստորև ներկայացված է 2017 թվականի ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	11	0.32	22	0.56	8	0.73	2	0.31	37	1.29	10	0.76
Արագածոտն	18	114.04	0	0.00	0	0.00	0	0.00	72	149.14	0	0.00	11	1.35	1	0.05
Արարատ	10	14.22	1	0.06	4	0.51	4	0.36	75	33.54	1	0.01	34	3.23	1	0.001
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	60	60.26	0	0.00	32	3.17	3	0.12
Գեղարքունիք	2	0.54	0	0.00	16	1.79	7	0.09	7	5.60	2	0.21	16	1.81	3	0.09
Լոռի	0	0.00	0	0.00	3	0.02	8	0.46	61	25.49	1	0.10	8	0.66	5	0.32
Կոտայք	8	15.84	1	0.50	25	0.61	7	0.18	95	54.96	0	0.00	48	4.19	9	0.41
Շիրակ	2	4.89	0	0.00	4	0.65	0	0.00	19	21.26	0	0.00	8	0.61	2	0.02
Սյունիք	0	0.00	3	0.61	2	0.02	2	0.97	17	12.31	0	0.00	10	0.71	0	0.00
Վայոց ձոր	12	93.47	0	0.00	0	0.00	2	0.04	17	5.90	0	0.00	3	0.25	2	0.005
Տավուշ	3	0.34	1	0.19	5	0.18	3	0.11	16	6.15	0	0.00	5	0.44	4	0.11
Ընդամենը	55	243.34	6	1.36	70	4.10	55	2.77	447	375.34	6	0.63	212	17.71	40	1.89

Ստորև ներկայացված է 2017 թվականի ապրիլին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	18	0.12	0	0.00	8	0.07	10	0.05	15	0.77	0	0.00	0	0.00	3	0.25	12	0.52
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	18	114.04	18	114.04	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	2	0.19	1	0.06	0	0.00	1	0.13	16	14.42	9	13.68	0	0.00	4	0.51	3	0.23
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	8	0.15	0	0.00	1	0.06	7	0.09	16	1.77	1	0.04	0	0.00	15	1.73	0	0.00
Լոռի	5	0.015	0	0.00	2	0.005	3	0.01	6	0.48	0	0.00	0	0.00	1	0.02	5	0.46
Կոտայք	12	0.53	1	0.50	11	0.03	0	0.00	28	15.99	7	15.23	0	0.00	14	0.58	7	0.18
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	5.54	2	4.89	0	0.00	4	0.65	0	0.00
Սյունիք	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	6	1.59	0	0.00	3	0.61	1	0.01	2	0.97
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	93.51	12	93.47	0	0.00	0	0.00	2	0.04
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	0.82	3	0.34	1	0.19	5	0.18	3	0.11
Ընդամենը	46	1.01	2	0.56	23	0.17	21	0.28	137	248.93	52	241.69	4	0.80	47	3.93	34	2.51

2017 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք (1.65 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի ապրիլին, 2016 թվականի ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 24.3 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 16.7 %-ով, իսկ մարզերում՝ 25.1 %-ով: Գյուղատնտեսական

նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 7.1 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 27.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 32.0 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 60.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	17	112.42	40.3	830.5	263.8	31	19.43	365.0	12000.0	3374.5
Ապարան	1	1.62	70.1	70.1	70.1	1	1.08	86.5	2727.3	635.0
Թալին						31	113.63	93.6	5494.5	681.3
Ծաղկահովիտ						7	14.83	79.5	1000.0	440.0
Արարատի մարզ										
Արտաշատ	8	1.51	274.9	3428.6	1080.0	35	13.26	335.1	10833.3	2684.5
Մասիս						15	7.50	200.0	11904.8	3401.0
Վեդի	1	12.17	283.3	283.3	283.3	24	12.46	207.0	10795.1	1984.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						30	22.10	294.3	9090.0	1471.7
Բաղրամյան						14	31.73	90.6	2561.1	840.5
Վաղարշապատ						16	6.43	444.4	11764.7	2018.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	0.01	199.8	1875.0	531.5
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի						2	0.12	51.1	2850.0	750.0
Սևան								52.2	2134.8	360.0
Վարդենիս	1	0.04	1757.6	1757.6	1757.6	4	5.47	41.2	2575.1	356.4
Լոռու մարզ										
Ալավերդի								170.4	6424.2	550.0
Գուգարք								234.6	6065.9	825.0
Սպիտակ						10	3.36	250.0	5555.5	665.0
Ստեփանավան						2	1.08	90.6	1686.6	415.0
Տաշիր						49	21.05	45.3	1384.4	190.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	12.59	102.3	608.7	355.5	16	2.89	279.3	11942.7	3950.0
Եղվարդ						60	22.51	174.4	11971.8	2591.5
Հրազդան	5	2.64	131.0	686.1	419.8	18	29.17	130.5	10256.4	1074.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						5	6.32	252.0	1693.1	705.0
Ամասիա								40.9	261.0	143.5
Անի						4	5.21	110.6	546.9	468.3
Աշոցք								58.5	215.8	142.0
Արթիկ	2	4.89	986.5	1000.0	993.3	10	9.73	79.4	1428.6	555.0
Սյունիքի մարզ										
Գորիս								92.6	1023.2	710.0
Կապան								120.0	841.6	462.5
Մեղրի						3	1.22	193.0	3000.0	832.0
Սիսիան						14	11.09	46.3	1977.4	540.0

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	89.17	20.7	20.7	20.7	9	3.88	125.0	10000.0	1800.0
Վայք	5	4.30	66.0	66.0	66.0	7	1.82	58.8	1430.7	640.0
Տավուշի մարզ										
Բերդ						9	2.14	213.3	3783.8	725.0
Իջևան	3	0.34	141.0	1200.0	847.0	2	1.52	267.5	9454.5	1660.0
Նոյեմբերյան						5	2.49	46.7	7368.4	1025.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի ապրիլին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասնավորագույն	Միջին			Նվազագույն	Մասնավորագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						6	5319.0	130.7	22200.0	2587.0
Ապարան						1	2200.0	124.1	609.6	389.5
Թալին						3	4917.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	1040.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	5058.4	416.7	855.0	526.2	5	4983.3	173.9	7140.3	902.5
Մասիս						21	19160.9	187.5	25000.0	1204.0
Վեդի						8	8194.0	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	17480.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ						16	14212.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	14	16316.1	51.8	55.0	53.0	3	1777.0	186.6	1084.3	683.8
Ճամբարակ								71.3	2286.2	147.0
Մարտունի	1	1000.0	112.6	112.6	112.6	9	10335.6	119.3	5000.0	278.0
Սևան						2	2700.0	240.0	3110.4	347.0
Վարդենիս						2	3286.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	186.8	2625.0	2625.0	2625.0	2	810.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						1	580.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ						3	3740.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան								88.2	1666.7	176.0
Տաշիր						1	39.8	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	4754.7	897.6	5434.3	3635.5	28	21953.0	264.5	35353.5	1957.5
Եղվարդ	1	1056.0	244.4	244.4	244.4	19	19398.3	173.6	27000.0	2854.0
Հրազդան								117.7	34848.5	1317.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	107.3	4408.2	4408.2	4408.2	4	4397.7	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	218.0
Աշոցք								40.8	144.0	65.0

Արթիկ	3	6367.8	122.1	244.4	162.9	4	1732.2	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	369.0
Կապան	1	140.0	1147.5	1147.5	1147.5	3	2884.0	67.9	2638.9	375.0
Մեղրի						2	900.0	68.5	632.9	270.0
Սիսիան						3	2866.0	123.5	875.0	263.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	1310.0	96.7	7659.6	506.5
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	782.0	75.8	810.0	131.0
Իջևան	3	859.5	1366.2	3000.0	1993.7	4	3586.0	74.1	14423.1	490.0
Նոյեմբերյան	2	930.7	891.1	2198.2	1544.7			125.0	1948.1	259.0

2017 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 712 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 94.0 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի ապրիլին, 2017 թվականի մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 1.2 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ աճել 4.7 %-ով:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 31 բնակարանի, 16 անհատական բնակելի տան, 326 հասարակական և 221 արտադրական նշանակության օբյեկտի, 116 հողի և 2 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում վարձակալված 347.56 հա հողից 0.38 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 347.18 հա հողերից 181.10 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 152.33 հա արդյունաբերական օբյեկտների, 4.81 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Սյունիքի մարզում՝ 155.68 հա, որից 4.31 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1464 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 13.0 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի մարտի համեմատ, նվազել է 31.0 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 13.1 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.5 %), անհատական բնակելի տների (21.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (12.8 %) և հողերի (8.9%) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 916 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի մարտի համեմատ նվազել է 21.6 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 2.2 %-ով:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում գրավադրվել է 306.67 հա հող, որից 1.52 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 298.78 հա կամ 97.4 %-ը գյուղատնտեսական նշանակության, որից 0.06 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով

հող գրավադրվել է Արագածոտնի մարզում՝ 163.98 հա, որից 163.36 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 146 գործարք: 2017 թվականի ապրիլին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի մարտի համեմատ, նվազել է 14.1 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 4.3 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 117 գործարք, որը 2017 թվականի մարտի համեմատ, նվազել է 4.1 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 20.6 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի մարտի համեմատ, նվազել է 39.6 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, 32.6 %-ով:

2017 թվականի ապրիլին հանրապետությունում արձանագրվել է 1407 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի մարտի համեմատ, նվազել է 30.0 %-ով, իսկ 2016 թվականի ապրիլի համեմատ՝ 18.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 12.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (19.7%):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե